

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանդիսությունները Երևանի պետական համալսարանում կայացան մայիսի 16—17-ին:

Մայիսի 16-ին գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցած նառաջրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ, որոնք բնութագրում էին Դեմիրճյանի գրական ժառանգության տարբեր կողմերը:

«Դեմիրճյանը և պատմությունը» թեմայով զեկուցեց դոց. Գ. Անանյանը, իսկ «Դեմիրճյանի քննադատական հայացքները» ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու Փ. Քալանթարյանը: (Այս երկու զեկուցումների ընդարձակ շարադրանքը լույս է տեսել մեր հանդեսի այս տարվա № 1-ում):

Դ. Դեմիրճյանի լեզվագիտական հայացքների մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Սաքսպետոյանը: Ջեկուցողը նշեց, որ Դ. Դեմիրճյանը լեզվական հարցերին անդրադարձել է ամենատարբեր առիթներով և տարբեր տեսանկյուններից: Դրանք նա բաժանեց երկու խմբի՝ զուտ լեզվական հարցեր և հարցեր, որոնք առնչվում են գրական երկի լեզվի ու ոճի, պատկերավորման արվեստի հետ: Սրանցից զեկուցողն առանձնացրեց անցյալի հայ գրողների լեզվին տրվող գնահատականները և ինտքի մշակույթի, ուղղագրության, ուղղախոսության, թատրոնի լեզվի, թարգմանության լեզվի. փոխառությունների, լեզվի ժողովրդայնության և բազում այլ հարցերի մասին Դեմիրճյանի ելույթները:

Դ. Դեմիրճյանին խորապես մտահոգել է նաև հայոց լեզվի զարգացման հեռանկարների հարցը: Կարևոր էր նաև մեր լեզվի մշակման գործում խոշոր դեր կատարած գրողների լեզվական քաղաքականության գնահատման խընդիրը: Թումանյանի լեզվի և ոճի դեմիրճյանական գնահատականը, ասաց զեկուցողը, զարմացնում է ընդգրկման խորությամբ և դիպուկ բնութագրումով:

Այնուհետև զեկուցողը անդրադարձավ լեզվական առումով Թումանյանի անմիջական նախորդի՝ Աղայանի լեզվի դեմիրճյանական գը-

նահատմանը: «Անընդհատ զարգացող հայոց լեզուն» հոդվածում Դեմիրճյանը կանգ է առնում խորհրդային շրջանում լեզվի առջև ծառայած խնդիրների վրա, նշելով, որ եթե մինչ-խորհրդային շրջանում հայոց լեզուն մշակվում էր սուկ գրական, երբեմն էլ գիտական ուղղությամբ, ապա նոր կարգերի հետ լեզուն ձեռք բերեց նոր ֆունկցիաներ՝ դառնալով պետական հիմնարկների և պետական կյանքի լեզու:

«Լեզվի հարցում պետք է կենսապետ լինել,—գրել է Դ. Դեմիրճյանը,—միայն լեզվագետ կամ այլ մասնագետ կամ գրող լինելը քիչ է»: Դեմիրճյանն իր մեջ միավորում էր այս ամենը,—եզրափակեց զեկուցողը:

Դ. Դեմիրճյանի գրական ժառանգության մեջ պատկանելի տեղ է գրավում նաև հրապարակախոսությունը, որը գնահատելու նպատակ ուներ ավագ դասախոս Ռ. Դավթյանի զեկուցումը: Հրապարակախոս Դեմիրճյանը կարևոր ասելիք ուներ ժողովրդի ու հայրենիքի բախտի, մարդու, նրա հասարակական կոչման և ճակատագրի վերաբերյալ, դրսևորել է բարձր սկզբունքայնություն, համարձակություն և անհաշտ պայքար է մղել խորթ հայացքների ու տրամադրությունների դեմ,— ասաց զեկուցողը: Դեմիրճյանի հրապարակախոսությունը նա բաժանեց երկու շրջանի՝ նախախորհրդային և խորհրդային:

Նախախորհրդային շրջանում Դեմիրճյանը «Տարագ», «Մուրճ», «Գործ», «Աշխատանք» պարբերականներում հանդես է եկել թատերախոսականներով, գրականության և արվեստի, հայ հասարակական կյանքի ամենատարբեր հարցերին նվիրված հոդվածներով: Դրանք հազեցված են հասարակական-քաղաքական բարձր իդեալներով, ունեն սոցիալական խորքվանդակություն և անարդար իրականության նկատմամբ անհաշտ քննադատական ոգի:

Խորապես գիտակցելով ռուս ժողովրդի հեղափոխական դերը, Դեմիրճյանը բարձր գնահատեց սոցիալատական հեղափոխությունը, ճշտորեն կողմնորոշվեց դեպի սովետական իշխանությունը, դարձավ սոցիալիզմի գաղափարների հետևողական պաշտպաններից ու

տարածողներից մեկը: 1920—30-ական թթ. նա մեծ եռանդով նվիրվում է երիտասարդ սերնդի դաստիարակման, նորի արմատավորման, սովետահայ գրականության և արվեստի սկզբնավորման վեհ ու պատասխանատու գործին:

Դեմիքոյան-հրապարակախոսի տաղանդը փայլեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ռազմաճակատային խրամատներում, հոսպիտալներում, գործարաններում ու կոլտընտեսային դաշտերում մարդիկ խոր հուզմունքով էին կարդում Դեմիքոյանի ակնարկները, հողվածները, որոնցում մեծ գողոն ու քաղաքացին դատապարտում էր ֆաշիզմը, սովետական բազմազգ ժողովրդին մղում հեռուական պայքարի, բռնադատման և սիրագործությունների: Իր հումանիտական բարձր ոգով գրած ստեղծագործություններում նա փառաբանում էր հայ ռազմիկների հերոսությունը, սովետական հայրենիքին նվիրված մարդկանց անձնագոհ արարքները:

Մայիսի 17-ին համալսարանի մեծ դահլիճում կայացավ մեծ գրողի 100-ամյակին նվիրված հանդիսավոր միսո: Գրոֆ. Մ. Մկրյանի բացման խոսքից հետո Դեմիքոյանի կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Հր. Թամրազյանը: Նա համառոտակի կանգ առավ գրողի կյանքի ու ըստեղծագործության առավել էական կողմերի վրա:

— Ծնվելով 100 տարի առաջ, ասաց զեկուցողը, Դեմիքոյանն ապրեց գրալուսի մի քանի սերնդի հետ: Գրական առաջին քայլերն արեց այն ժամանակ, երբ դեռ կենդանի էր Ռաֆֆին, աշակերտեց Պոռչյանին ու Լևոն Մանվելյանին: Գրական ընկեր ու մտերիմ եղավ Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի հետ: Ստեղծագործական իր ուղին նա սկսեց որպես բանաստեղծ, բայց այստեղ նրան «խանգարեցին» նախ Թումանյանն ու Իսահակյանը, ապա՝ Տերյանն ու Չարենցը:

Անհանգիստ բնավորությունն ու խառնվածքը հարկադրում են գրողին անընդհատ որոնել, իր ուժերը փորձել արձակի ու դրամատուրգիայի ժանրերում: 1910-ական թթ. տեղի է ունենում մի հետաքրքրական կերպարանափոխություն: Փիլիսոփայական վերացականության և գրքային տրամադրությունների մթնոլորտից Դեմիքոյանը թափանցում է մարդկանց աշխարհը, կենդանի իրականության խորքերը, կենտրոնանում ժողովրդական կյանքի փիլիսոփայության վրա, ստեղծում բարձրարվեստ արձակ և դրամատիկական երկեր: («Ջութակ և սրինգ», «Ավելորդը», «Ժպիտը», «Տերտերը», «Ստամոքսը», «Վատակ», «Դատաստան»):

Սակայն մեծ հաջողությունը եկավ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Բացառիկ եռանդով նա մասնակցեց սովետահայ գրականության սկզբնավորմանը, օրգանապես միահյուսեց իր կենսափորձն ու տաղանդը, նոր իրականության և գրողի սերտ կապն ընդլայնեց ստեղծագործական հնարավորությունները: Ծնվեցին «Քաջ Նազարը», 1920-ական թթ. պատմվածքներն ու վիպակները: Սովետական Հայաստանի հեռանկարները, աշխատանքն ու պայքարը բազմափորձ և իմաստուն գրողին հարկադրում էին խորանալ իր ժողովրդի ներկայի ու պատմության մեջ, բացահայտել «հայկական համամարդկայնությունը»:

Հայրենական պատերազմի շրջանում արդեն վաթսուներե անց Դեմիքոյանը դրսևորեց քաղաքացու և գրողի բացառիկ արիություն: Բուռն ներշնչանքով նա ստեղծում է սովետահայ առաջին պատմավեպը՝ «Վարդանանքը»: Պատմության խոր իմացությունն ու արտակարգ ստեղծագործական երևակայությունը հնարավորություն են տվել գրողին պատկերելու V դարը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական, ինքնապաշտպանական պայքարը, վերլուծական վիթխարի ուժով թափանցելու ժողովրդի հոգու և մտքի ծալքերը, ներկայացնելու հայրենի հողի սիրուն մարտնչելու ելած հայ շինականին ու փիլիսոփային, քաղաքական գործչին ու դիվանագետին, ազնվականին ու հոգևորականին, հայ զինվորին ու հայ կնոջը: Դեմիքոյանը պատկերում է Ավարայրը, Հայաստանը ներկայացնում միջազգային բարդ կապերի մեջ, պատմության մատերիալիստական ըմբռնման դիրքերից մեկնաբանում անհատի և ժողովրդի դերը ազատագրական շարժման մեջ:

Դեմիքոյանն արտակարգ եռանդով մասնակցում էր հասարակական քաղաքական կյանքին, գրում էր քննադատական, հրապարակախոսային սուր հողվածներ: Մինչև կյանքի վերջը միտքը մնաց արթուն, ձեռնարկեց գրել Մաշտոցի և գրերի գյուտի, հանք ոգու նյառաման պատմությունը: Նա հետացավ կյանքից 79 տարեկան հասակում, թողնելով իր Բավեր-ժական երկերը, որոնցում հարստացրեց ազգային արվեստը համամարդկային զեղեցկություններով,—եզրափակեց զեկուցողը:

Հոբելյանական հանդիսությունները, որ տեղի ունեցան նաև Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում և այլուր, սովետական գրականության զարգացմանը Դեմիքոյանի մատուցած ծառայությունների գնահատականն էին: